




# ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմայրի» թերթի հավելված


1991 թ. նոյեմբեր, № 50: Գինը՝ 50 կոպ.



Լուսանկարը՝ Ա. ԳՈՒԼՅԱՆԻ

Ծաղիկների վրա նորից, թող աչք բացեմ կսկիծով,  
 Թերթիկները զգուշ բացվեն ու աչքի պես նայեն ինձ  
 Մանուկներ՝ են գուցե նրանք, աղջիկներ՝ են՝ արցունքով  
 Շանաչում են և ինձ գուցե, որ նայում են դեռ հեռվից:  
 Շանաչում են այս արևին, այս լուսնդակին՝ այսքան նոր,  
 Շանաչում են այն տղային, որ միշտ ձեզ էր համբուրում,  
 Ու մի օր էլ տղան չկար, 1945ցից դուք սարսուռով,  
 Հարց են տալիս ծաղիկներին, - ու՛մ սիրով եք դուք ապրում:  
 Լաց են լինում մորս նման ու մորս պես աղոթում,  
 Այս ինչ արիք տեր իմ աստված, ում հետ կիսեմ խոսք ու վիշտ  
 Ծաղիկները բացված աչք են, խոսող ծիլ են միշտ արթուն,  
 Նայում են ես ծաղիկներին և խորհում են անհանգիստ:  
 Ու մտի պես հալվող մի օր, ծաղկաթերթից իմ պոկված,  
 Եվ ջրի պես տազնապելով, որ գնում է կամքով իր,  
 Ձեռնաղիկներն այս ձեռնախ, աչիկները լայն բացած,  
 Եվ նրանց մեջ այն տղան էր, կանչում էր քեզ՝ համբուրի:  
 Եվ մոտոն է դարձել կարծես, օղբ, բույրը գիշերվա,  
 Աստղաշոր է երկինքն արդեն, և լուսնակը մի՛ ճամփորդ,  
 Աստղաբույլի մեջ տեսնում եմ, քեզ համբուրող այն տղան,  
 Աղջկան է նա միշտ փնտրում, ձեռնաղիկին՝ օրիորդ:  
 Ծաղիկների վրա նորից, թող աչք բացեմ կսկիծով  
 Թերթիկները զգուշ բացվեն ու աչքի պես նայեն ինձ  
 Մանուկներ՝ են գուցե նրանք, աղջիկներ՝ են՝ արցունքով,  
 Շանաչում են և ինձ գուցե, որ նայում են դեռ հեռվից:

ՅՈՒՐԻԿ ՄՆԻՔԱՐՅԱՆ



Լուսանկարը՝ ՀՄ. ԿԱՐՆՊԵՏՅԱՆԻ



**ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՈՐԻ ԿՈՇԻՐՈՑԱՆ**

Ծնվել է 1948 թվականին, Լենինականում: Մանկուց ճաշակել է պատերազմի դաժնությունը: Դեռ 14-ը շրջորած նա գրեց իր աշխատանքային կենսագրությունը: Մանկագիտությունը գողող էր, օգնության էր հասնում բոլորին՝ ծանր-անձանքի: Որակյալ մասնագետ էր. «Ոսկի ձեռքեր ունի», արագես էին բնութագրում նրան ճանաչողները: Չարաբաստիկ այդ օրն էլ նա գնացել էր օգնելու կնոջ ընկերուհուն, խաթարված ջեղուցման սխառնը տրոգելու: Հենց այդտեղ էլ գրեց, թողնելով բարի անուն, և այդպես էլ չիմանալով, որ կինը՝ ՍՈՒՎԱՆՆԱ ՄԱՆՐԻԿԻ ԿՈՇԻՐՈՑԱՆԸ որք թողնելով երեք երեխաներին, Լույսպես դարձել է մահակոյ աղետի գոհը և անհետ կորել կոշիկի ֆաթրիկայի փեյլատակների տակ:



**ՄԱՐԻԱՄ ՏՈՒՆԿԻ ՏՆՆՈՑԱՆ**

Ծնվել է 1956 թ. Լենինականում, ապարտել է № 6 միջնակարգ դպրոցը: Աշխատում էր ռեգիստրորների գործարանում: Հարգված էր կոլեկտիվի կողմից: Սիրով մասնակցում էր կար ու ձևի խմբակին:

Բնավորությամբ բարի էր, հոգաւար, սիրում էր եղբոր երեխաներին, սիրում էր կյանքը: Ավագ, դասն երկրաշարժը չպահպանեց երիտասարդ հասակում կորեց նրա կյանքի թելը:



**ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹԻ ԴԱՎԹՅԱՆ**

Ծնվել է 1974-ին: Սովորում էր № 2 դպրոցի 8-րդ դասարանում: Շատ էր սիրում պարել, դաշնամուր նվագել, ասեղնագործել, կարգալ գեղարվեստական գրքեր: Օգնում էր իրենից փոքրերին դասեր պատրաստելու: Մոր միակ սիրտանքն էր: Մայրը մինչև խանութից տուն էր վերադառնում, տունը լրիվ կարգավորած, մաքուր էր տեսնում: Իսկ հիմա նա չկա, մայրը մենակ է, աչքը ճամփին սպասում է նարինեի ճանապարհին:



**ՆԻՆԵՏԱ ՄՈՒՇԵՂԻ ՍԱՖԱՐՅԱՆ**

Ծնվել է 1921 թ.: № 2 դպրոցից էր, ապարտել: Բժշկության սերը նրան տարավ Երևանի բժշկական ինստիտուտ: Երկար տարիներ աշխատում էր № 2 մանկական հիվանդանոցում, սիրված մասնագետ էր և լավ համարում ուներ բուժվողների շրջանում: Վերջին տարիներին աշխատում էր ծննդատանը, ուր և դեկտեմբերյան դաժան երկրաշարժին կնքեց իր մահկանացուն:



**ՅՈՒՐԸ ՆՈՒՅՆ ՏԱՆԻՑ**

ՎԱՐԴԱՆ ՀԱՐԱԲԿԻ ԱՆՏՈՆՅԱՆ, ծնված 1960 թ.: Ընկերասեր և շտրիպայի մի երիտասարդ, որին այսօր ախտ սանքով են հիշում ծանոթ ու բարեկամ: Տիրապետում էր մի քանի արհեստների, ինչպես ասում են՝ ոսկի ձեռքեր ուներ Վարդանը: 1977 թ. ապարտեց № 81 միջնակարգ դպրոցը և ընդունվեց շինարարական տեխնիկում: Այնուհետև պշխատանքի անցավ Ժիրակի շրջանի պետապ տեխնոլոգիայի հասցե կյանքը չծախսեց նրան: Աղետը նրան էլ չիմանեց ու տարավ:

Կինը՝ ՀԱՄՄԻԿ ԺՈՐՇԻԿԻ ԱՆՏՈՆՅԱՆ, ծնված 1960 թ.: Ավարտել է № 28 միջնակարգ դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել հասարակական տեխնիկումում: Աշխատանքային կենսագրությունը սկսեց տեքստիլ արտադրական միավորման գործվածքային ֆաբրիկայում: Ազնիվ էր ու շիտակ, համեստ ու բարի: Ինչքան իղձեր ու երազանքներ ունեին նրանք իրենց տրապատեղծ ընտանիքի համար ծրարած: Արտյուն ու Մեարդը մեծանում էին անհոգ և ուրախ, ծընողները նրանց կողքին էին, նրանց հետ: Երկու տարին չեբոլորած ՄԵՍՐՈՂԻԿԸ իր թողվածու լեզվով կրկնապատկել էր տան երջանկությունը: Եվ ինչ իմանալին, որ վաղը կանաների ընթացքում ունեցած երջանկությունը հօդս է ցնդելու: Մնաց միայն Արտյունիցը, մնաց փոքրիկ եղբոր և ծնողների կարողը արտում:

Բույրը՝ ԳԵՂԵՑԻԿԻ ՀԱՐԱԲԿԻ ԱՆՏՈՆՅԱՆ, ծնված 1959 թվականին: Ավարտել է № 8 միջնակարգ դպրոցը:



ուսումը շարունակել բժշկական ուսումնարանում: Նա լավ էր գիտակցում իր ընտրած գործի կարևորությունը, օգնում էր մարզի ց տողությունը վերականգնելու համար: Աշխատում էր Ախտյանի հիվանդանոցում որպես բուժքույր: Այնքան ազնիվ էր, այնքան մարդամոտ, որ շատերն էին հետևում նրա մարդկային օրինակին: Նա միշտ առաջավոր բուժաշխատողի կերպար մնաց:

ՎԱՉԱԳԱՆ ՆԵՐՏՈՒՄՅԻ ԹԱՌՈՑԱՆ: Ծնվել է 1960 թվականին: Մանկությունը անցկացրել է Մարմաշենում, այնտեղ էլ ապարտել է դպրոցը: Հանդիպել էր նա կյանքի ընկերուհուն՝ Գեղեցիկին, ամուսնացել նրա հետ: Նոր էր լրացել ամուսնության վեցերորդ տարին: Ունեին երկու դուստր, մեկը մյուսից գեղեցիկ և անմահ:

ԱՆՆԱ ՎԱՉԱԳԱՆԻ ԹԱՌՈՑԱՆ ԱՆԺԵՆԱ ՎԱՉԱԳԱՆԻ ԹԱՌՈՑԱՆ Առաջինը երեք տարեկան էր, իսկ մյուսը ընդամենը մեկ տարեկան, գրկանոց: Որքան բան ինչեց աղետը մեզանից, խառնեց մարդկանց պլանները, նպատակները մնացին կեն ճանապարհին: Աղոյրը ինչ կդաժնալին այս լուսն փոքրիկները, որ ծնվեցին աշխարհին՝ իրենց մասն ու բաժինը տալու համար: Մակայն չվաղեցավ կյանքի ջաղջությունները, ծնողների հետ միասին հեռացան աշխարհից... Ամուսինները Վարդաղը թաղամասում բնակարան տուցան: Ընդամենը մի քանի շաբաթվա համար... Այդ օրը նոր տուցած բնակարանում էին: Ամեն ինչ հիշողություն դարձավ: Նրանց կյանքի կորուստն անավոր էր: Չես հաշտվում կատարվածի հետ:



**ՀԱՄԼԵՏ ՏՈՒՐԿԻ ՓԱԾԱՅԱՆ**

Ծնվել է 1975 թ., սեպտեմբերի 30-ին: Սովորում էր № 9 դպրոցում, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն: Չափազանց ազնիվ, ծնողասեր, ընկերասեր երեխա էր: Մորից հետո երկի ամենից շատ սիրում էր տատիկին, որն այդպես էլ չիմացավ իր առաջնեկ թոռան մահը: Մի ամբողջ շաբաթ անընդհատ երազում տեսնում էր, որ իրեն 5-րդ հարկից զըցում են սերուն և ինքն ամբողջովին ջախջախվում է: Այդպես էլ գտավ նրան մայրը՝ Սուսաննան, չարաղետ երկրաշարժից, 15 րոպե հետո:



**ԱՆԳԻՆ ՆՈՍՐՈՂԻ ԳՐԻԳՈՑԱՆ**

Ծնվել է 1942 թվականին, Գուկասյանի շրջանի Մուսանյան գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ամուսնացել և բնակություն էր հաստատել Լենինականում: Նա երեք երեխաների մայր էր: Աշխատում էր կոշիկի արտադրական միավորումում, առաջավոր բանվորուհիներից էր: Այնտեղ էլ օրհ գնաց պղծուհին:



**ՍԿԵՏԱՆԱ ՆԱՉԱՏՈՐԻ ԳՐԻԳՈՑԱՆ**

Ծնվել է 1939 թ. մարտի 25-ին, Լենինական քաղաքում: Ավարտել է ԵրՊԻ-ի Լենինականի մասնաճյուղի շինարարական ֆակուլտետը կարմիր դիպլոմով, ապա ավիառատորան Խարկովում: Աշխատել է «Լենին» տրեստում, ԵրՊԻ-ի Լենինականի

մասնաճյուղում որպես ավագ դասախոս, իսկ 1984 թվից «Հայաստան» կինոստուդիայում որպես տնօրեն: Իր մարդկային բարձր հատկանիշների և աշխատասիրության շնորհիվ նա սիրված էր թե իր աշխատած կոլեկտիվներում, թե ծանոթների, բարեկամների կողմից:



